

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի պատասխանները

XI դասարան

1. Ամենայն հայոց բանաստեղծը ամբողջ կյանքում այրվեց հայրենիքի բախտով ու ճակատագրով: Նա այնտեղ էր, որտեղ որոշվում էր իր ժողովրդի ճակատագիրը, որտեղ հայ որբերն էին, որտեղ իր ազդու խոսքի կարիքը կար:

Հայրենասիրական թեմաներով գրված բանաստեղծություններն են «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում», «Բարձրից», «Հոգեհանգիստ», «Հայրենիքիս հետ», մի շարք քառյակներ՝ «Բերանն արնոտ մարդակերը էն անբան», «Կիամքս արի հրապարակ», «Բարձր է հընոց աշխարհքն Հայոց» և այլն:

«Հայոց վիշտը» բանաստեղծության մեջ Թումանյանը ազգային վիշտը համեմատում է անհուն ու խավար ծովի հետ, որտեղ տառապելով լող է տալիս իր հոգին:

բանաստեղծությունը գրվել է 1902-ին, երբ հայ ժողովուրդը, կորցրած առագաստ ու ղեկ, պայքարում էր «մարդակեր գազան» թուրքի և «քաղաքակիրթ» նվաճող ցարի դեմ և ոչ մի տեղից չունեի փրկության ակնկալիք: Եվ բանաստեղծի հոգին այդ տառապանքի ծովում չի գտնում հանգրվան: Նույն թվականին գրված «Հայոց լեռներում»

բանաստեղծության մեջ հայոց հանճարը ուրվագծում է իր ժողովրդի անցած ճանապարհը, պայքարը, հավատը լուսավոր գալիքի հանդեպ: Այս բանաստեղծությունը հույսի, հավատի, հաղթանակի կամք է արտահայտում՝ Թե երբ կբացվի պայծառ առավոտ՝ Հայոց լեռներում, Կանաչ լեռներում:

Սակայն գալիս է «արյունալի աղետներով» 1915-ը և բանաստեղծը տեսնում է, որ ամբողջ աշխարհն է «համատարած ցավի ու տառապանքի» ծով, ուր «ուտում են ամենքն ամենքին, ամեն հայրենիք՝ իրեն գավակին, և իր պաշտողին՝ ամեն մի աստված»: Սա «Բարձրից» բանաստեղծությունն է, որին հետևում է մեր գրականության ամենատխուր ողբ- աղոթքը՝ «Հոգեհանգիստը». «մարդակեր գազան մարդու» գործած դաժանորեն անհասկանալի ոճրագործության արդյունքում մարեցին անգամ Հայոց աշխարհի մեծ կերոնները, որոնք վառում է բանաստեղծը՝ խնկարկելով «ցրված ու թշվառ հոգիների» հիշատակը: Եվ վառվում են Հայոց աշխարհի կերոնները՝ «Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրուֆ, Թանդուրեք, Արագած», ու հնչում է բանաստեղծի նարեկացիական ողբը՝ «հանգե՛ք իմ որբեր»:

Նույն՝ 1915- ին ծնվում է «Հայրենիքիս հետ» անզուգական բանաստեղծությունը, որտեղ բանաստեղծը ներկայացնում է «զարկված ուզըրկված, ողբի ու որբի» հայրենիքը, բայց անխախտ հավատով օրհնում է նաև «հույսի ու լույսի, նոր ու հզոր հայրենիքի» գալիքը՝ հավատալով իր ժողովրդի կեսահաստատ ուժին:

Հենց այս հավատը առաջնորդեց հայոց զորքին ու աշխարհագորին դեպի երկրորդ Ավարայր՝ Սարդարապատ, և «Հայոց բարձր ու կանաչ լեռներում» ծնվեց «Հույսի ու լույսի հայրենիքը», որը դարձավ հանայն հայության հայրենիքը:

1915թ. հայ ժողովրդի համար ողբերգական օրերից մի օր, երբ Թումանյանը, մոռացած ամեն ինչ, զբաղված էր էջմիածնի վանքի բակում հավաքված հազարավոր գաղթականներին օգնելու, խնամելու, փոխադրելու և այլ գործերով, հանկարծ պայծառ օրը մթնում է, և ուժեղ տեղատարափ է սկսվում: Թումանյանը բացում է

նորակառույց, դեռևս անավարտ Վեհարանի դուռը և բացօթյա մնացած գաղթականներին տեղավորում այնտեղ: Երեկոյան Գևորգ 5-րդ Վեհափառը կանչում է բանաստեղծին և հանդիմանում ինքնագլուխ արարքի համար: Թումանյանը փորձում է բացատրել հազարավոր մարդկանց օգնելու անհրաժեշտությունը, սակայն Վեհափառը բացատրություն չի ընդունում:

-Մյուս անգամ չհամարձակվեք իմ կամքին հակառակ գնալ, -ասում է նա:

-Եթե անհրաժեշտ լինի, կհամարձակվեմ, և ինձ ոչ ոք չի խանգարի, - վճռականորեն պատասխանում է Թումանյանը:

-Դուք հասկանո՞ւմ էք, թե ում հետ էք խոսում և ում կարգադրությունն էք անտեսել: Ես Ամենայն հայոց հայրապետն եմ:

- Իսկ դուք գիտե՞ք, թե ում հետ էք խոսում: Ես էլ ամենայն հայոց բանաստեղծն եմ, - պատասխանում է Թումանյանը:

2. Ավետիք Իսահակյանի «Հայրենի հողը» բալլադը հայրենասիրական հզոր ոգեշնչումով գրված ստեղծագործություն է, որի հիմքում արևելյան մի լեզենդ է. Իսահակյանը այն լսել է Շիրակի գյուղացիներից: Լինում է մի քաջ զորավար, որը միշտ հաղթում է թշնամուն, սակայն թագավորը նախանձում է նրա փառքին ու ժողովրդականությանը և հերթական շքեղ հաղթանակից հետո, նրան մեծարելու փոխարեն, նշանակում է մի ապաշնորհ զորականի թիկնապահ: Ջորավարը, խորապես վիրավորված, հեռանում է երկրից: Իմանալով այդ մասին՝ թշնամին հարձակվում ու ավերում է երկիրը:

Թագավորը, չկարողանալով դիմակայել թշնամուն, կանչում է զորավարին, սակայն վերջինս մերժում է թագավորի բոլոր բանագնացներին: Նրա մոտ են գալիս շինականը՝ մի բուռ հողով, և գուսանը՝ հարազատ երգերով. Ջորավարի հոգում նորից արթնանում են հայրենի երգերն ու անմոռաց հուշերը, և նա, մոռանալով ծանր վիրավորանքը, սլանում է ազատելու հայրենիքը: Հայրենի հողի բույրը և ժողովրդի երգի կարոտը գերադասվում են ամենայն անձնականից ու վիրավորանքից, որովհետև՝

Այդ հողն է նրան ծնել ու սնել,

Իր մայրն ու հայրն այդ հողն են դարձել,

Եվ հայրենիքն է, ժողովուրդն անմեռ,

Եվ նախնիքները, որ հող են դարձել:

Հայրենիքը լքող իմ հասակակիցներին հորդորում եմ հետևել քաջ զորավարի օրինակին. Հայրենիքից չեն խռովում, հայրենիքին տու՛ր ամենաթանկը և ապրի՛ր՝ նրա մայրական գրկում. «Որքան էլ օտար ջրերը խոստանան անմահություն..... Նուարդ Հայոց աղբյուրն է քաղցրահամ»:

Մի՛ մտածիր՝ ի՞նչ է տալիս հայրենիքը քեզ, մտածիր՝ ի՞նչ ես տալիս դու հայրենիքիդ, առանց որի, մոլորակի որ անկյունում էլ լինես, քեզ որք ու օտար ես զգալու: Մի՛ դավաճանիր ինքդ քեզ ու Արարատին:

1926 թվականին Իտալիայում Իսահակյանը գրում է «Ռավեննայում»

բանաստործությունը՝ ընդամենը 12 սեղմված տողերում՝ տալիս է հայրենիքի հավերժության գաղափարը, այդ հավերժության անխախտ խորհրդանիշի՝ Արարատի կերպարով որի «Ծեր կատարին Դար է եկել, վայրկյանի պես, Ու անցել»։ Անցել են մահախուճապ սերունդները՝ անկարող լինելով հասկանալու նրա լույսը. Յուրաքանչյուր սերունդ նայում է այդ հավերժությանը ու անցնում, իսկ հավերժության խորհրդանիշ

լեռը անասան հավատով սպասում է հերթափոխվող սերունդներին, որպեսզի նրանց հասկանալի դարձնի իրենց անցողիկությունն ու իր հավերժությունը: «Հայաստանը ես միշտ կրել եմ իմ հոգում, ուր որ եղել եմ, Հայաստանը տարել եմ ինձ հետ: Նայել եմ Մոնբլանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց տեսել եմ Երեբույքը և Հռիփսիմեի տաճարը: Լսել եմ Նեապոլի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգերով»: Ահա այս հրաշք բանաստեղծության բանալին:

Արարատի կերպարին անդրադարձել են հայ գրականության բոլոր սկսնակ և մեծ գրեթե բոլոր բանաստեղծները՝ Նարեկացի, Աբովյան, Թումանյան, Տերյան, Չարենց, Դավթյան, Կապուտիկյան, Էմին, սփյուռքահայ շատ բահաստեղծներ:

3. Տերյանի հայրենասիրական թեմայով գրված երկերը ամփոփված են «Երկիր Նաիրի» շարքում: Ընտրելով «Երկիր նաիրի» վերնագիրը՝ Տերյանը վերակենդանում է Հայաստանի հնագույն անվանումներից մեկը՝ վկայակոչելով հայրենիքի հնագույն փառքը, հիշեցնելով պատմությունը: Չարենցը այս շարքը անվանել է «Նաիրյան խոսքերի թանգարան»: Շարքն ստեղծվել է 1913- 1917թթ.՝ Հայաստանի ամենաողբերգական տարիներին (կոտորածներ, ցեղասպանություն, Արևմտյան Հայաստանի կորուստ, հեղափոխական խմորումներ): Շարքն ընդգրկում է 13 բանաստեղծություն և սկսվում է «Որպես Լայերտի որդին» բանաստեղծությամբ. Տերյանն իրեն համեմատում է հունական առասպելաբանության հերոսներից մեկի՝ Լայերտի որդի Ողիսևսի հետ, որը հայրենիք էր վերադարձել բազում փորձություններից հետո և ազատել իր հայրենի Իթակեն: Հայրենիքից հեռու ապրող բանաստեղծը վերադառնում է հայրենի երկիր՝ ունկնդիր լինելու նրա հին երգին, վերադառնում է «Դեպի քարերը՝ ազնիվ ու հին, և խրճիթները՝ ահով նիրհող»: Այս մասին Տերյանը նամակներից մեկում գրում է.

«Չէ՞ որ այդպես, իմ հոգու նման այրվում է իմ երկիրը, իմ Նաիրին, գուցե դրա համար է այրվում իմ հոգին, որովհետև իմ հոգու մեջ Նաիրյան չքնաղ երկիրն է այրվում»: 1913-ին հնչում է տազնապալի հարցը՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես,

Վերջին երգիչն իմ երկրի», բայց հեղինակի ճարտասանական հարցը իսկույն վանում է հաջորդ բանաստեղծությունը, որտեղ նա անասան հավատով հավաստում է, որ «Խաչվածին մահ չկա» և «յոթնապատիկ խոցված Տիրամայրը»

«Հեզ ընդունել է երդում ու երկունք, դու՛րս արքայաբար վեհ ու անհպարտ», բայց այդ հայրենիքի որդին համոզված է, որ իր երկիրը չի կարող պարտվել և կրկին գրահավորվելու կոչ է անում. «Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավա՛ն, Չրահավորվի՛ր խանդով խնդագին, Վառի՛ր երկունքի գիշերում խավար Հրով մկրտված նաիրյան հոգին»: «Երկնի՛ր իմ երկի՛ր, հավատով անմար, Սուրբ է քո ուղին, և պսակը՝ վեհ»:

«Մի՛ խանձեք...» բանաստեղծությամբ Տերյանը ազգային բարձր

արժանապատվությամբ հաստատում է, որ

Բարբարոսներ շատ կըզան ու կանցնեն անհետ,

Արքայական խոսքը մեր կըմնա հավետ...

Որպես Փյունիկ կրակից կելնես, կելնես նոր

Գեղեցկությանբ ու փառքով վառ ու լուսավոր:

Արիացի՛ր, սի՛րտ իմ, ե՛լ հավատով տոկուն,

Կանգնի՛ր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն:

Նույն վերնագրով «պոեմանման վեպ» է գրել նորագույն գրականության հիմնադիր Եղիշե Չարենցը՝ կրկին հաստատելով Նաիրի երկրի հավերժության գաղափարը: Այս վեպի գլխավոր հերոսը Կարսն է, որն ընկնում է, բայց ճակատագրի հետ հաշտեցման եզր է որունում՝ Նաիրի երկրում ապրելու համար: Նույնն է երկու բանաստեղծների և՛ տագնապ, և՛ հավատը, նույնն է անխախտ ու անբացատրելի կարոտը, նույնն է Նաիրի երկրի անցյալ փառքերի հիշատակումը:

4. «Հեռացումի խոսքեր» բանաստեղծությունը Չարենցը գրել է 1917-ին Մոսկվայում: Կյանքի անողոք հարվածներից տառապող բանաստեղծը հուսալքված է, վիրավորված ու խաբված. Գնացել էր Մոսկվա՝ հմալսարանում ուսանելու, բայց «համալսարան ընկնելու փոխարեն՝ ընկա հանրակացարան », արձանագրում է Չարենցը: Մոսկվայում նա հանդիպում է ամազոնուհու շորեր հագած Կարինե Քոթանջյանին . վերջինս գնում է կայարան՝ ճանապարհելու Չարենցին և հենց կայարանում էլ Չարենցը իր սիրած աղջկա համար կարդում է այս բանաստեղծությունը: Կյանքի անողոք հարվածները, հիասթափությունները, մերժված սերերը, աչքերի կրակներն ու հոգու աստղերն ինքն իր մեջ մարած բանաստեղծը սիրտը բացում է մտերմուհու առաջ՝ խնդրելով ոչ մի դեպքում չանհիծել

«խեղճ կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան»: Կյանքի առաջադրած բազմաթիվ հարցերի պատասխանները նա չի գտնում և ճարտասանական հարցով դիմում է սիրած էակին «Իչպե՛ս, ինչպե՛ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած, որ ձեռքերս չդողան, որ օրերս ներեն ինձ»: Նա կասկածում է անգամ ինքն իրեն, կարծում է ,որ սուտ է անգամ սիրած էակի կարոտը.

Գուցե հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս ես, ու սուտ թվա իմ հոցու քո կարոտը սրբազան, Ինչ էլ լինի քո՛յր իմ, քո՛յր, հեռանալիս չանհիծես խեղճ կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան:

«Տաղ անձնական» բանաստեղծությունը գրվել է Կարսում, երբ պատերազմի սարսափների միջով անցած Չարենցը կարճ ժամանակով եկել էր իր պաշտելի քաղաքը և բախվել «բութ հայացքներով անտարբեր մարդկանց», որոնք անհաղորդ են իրենց շուրջը աղմկող աշխարհի նկատմամբ, ու բանաստեղծն էլ դառնում է անտարբեր այդ աշխարհի նկատմամբ և հարվնում է՝ Եվ ու՛մ համար, էլ ու՛մ համար կարոտակեզ երգե հիմի սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով: Բայց նա չի չարանում «խելագար» աշխարհի դեմ, այլ ձգտում է դեպի անհայտ հեռուները, «դեպի եզերքը Ամենտի՛ իր բարձր, հին ու աստղային երազների ճանապարհով»: Նա փնտրում է իր հարազատ վայրերն ու մարդկանց և չգտնելով՝ խնդրում է իր սիրած աղջկան տեսնելու դեպքում փոխանցել հրաժեշտի՝ « մնաս բարովը»:

Ու էլ մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.

Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն.

Թե Կարինե Քոթանջյանին տեսնեք Կարսի փողոցներում,

Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ՝ մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ...